ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԲ-ՌՅՀԳ | 1923

ՀԱՏՈՐ Զ | ՀՈԿՏԵՄԲԵՐ ԹԻՒ 10

Ս. ՂԱԶԱՐ

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊԱՏԱՐԱԳ ԱՂԷԻ ԵՒ ՄԱՐԻԻ

Վ. Էրմոնի՝ աշխատակից Ֆրիստոնէական Հնախօսութեան Բառարանին՝ հետեւեալ ծանօթութիւնները կու տայ Աղէի և Մարիի Պատարագամատոյցին վրայ։

Պատարագամատոյցս Նեստորականաց սովորական գործածականն է, ինչպէս նաև քաղդէացի ուղղափառք զայս կը գործածեն. ընդհանրապէս կը կոչուի սուրբ Առաքելոց պատարագամատոյց, վասն զի Նեստորականք կը համարին իրենց աշխարհին առաքեալներ Աղէ և Մարի։ Ըստ իրենց աւանդութեան՝ Աղէ, որ է Թադէոս և իրեն երկու աշակերտները Աղէ և Մարի, Միջագետքի աւետարանիչներն են և հիմնած՝ այդ եկեղեցին. Եւսեբիոս իւր Եկեղեցական Պատմութեան մէջ կ'ընդունի զայս։ Եղեսիոյ իշխեցողը Աբգար Ուքամա, այս ինքն է Սև, կը բռնուի ծանր հիւանդութեամբ, և լսելով Փրկչին գործած սքանչելիքները՝ կը գրէ իրեն՝ որ գայ զինքը բժշկէ։ Փրկիչը գալ կը խոստանայ, որ իրեն պիտի դրկէ մէկը։ Թովմաս կը յղէ եօթանասուն երկու աշակերտներէն Թադէոսը (Աղդէն), որ կ'երթայ Եդեսիա, և գթագաւորը կը դարձնէ քրիստոնեայ՝ գրեթէ բոլոր ժողովրդով։ Միջագետքի քրիստոնեայք իրենց Պատարագամատոյցը կը համարին իրենց առաջին քարոզչաց Մարիի և Աղէի գործ, ինչպէս Ասորիները Երուսաղէմի առաջին եպիսկոպոսի Յակոբայ կ'ընծայեն, և Եգիպտացիք՝ Ս. Մարկոս աւետարանչին, և կը կոչեն՝ Պատարագամատոյց Երանելի առաքելոցն, շարադրեալ ի Սրբոցն Աղէի և Մարիի՝ վարդապետաց արեւելեայց։ Արդի քննադատութիւնը կը համարի, որ այս ամէն աւանդութիւնք ծնունդ առեր են վարդապետութիւն Աղդէի գրուածէն, ուսկից և Եւսեբիոս առեր է։ Աղդէի վարդապետութիւնը իբրև ստոյգ հեղինակութիւն մ'ընդունուած չէ, և իւր ծագումը Ֆրիստոսի երկուշաբթի յիսուն թուականէն առաջ

digitised by A.R.A.R.@

ղնել կարելի չէ, հետեւաբար այսպիսի գրուածի մը վրայ հաստատուած՝ կարելի չէ պատմական վաւերականութիւն մ՚ենթադրել։ Ադդէի Միջագետաց մէջ քարոզութիւնը տարակուսական է, թէեւ վաւերական է որ Միջագետաց մէջ քրիստոնէութիւնը մուտ գործեր էր քրիստոնէութեան առաջին դարուն մէջ։ Սոզոմենոս կը վկայէ, որ քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը կար նոյն առաջին դարուն սկիզբները Միջագետաց մէջ։ Որոշ է, որ Աբգար Ը. արքայն Միջագետաց (179–216) քրիստոնեայ էր ըստ հեթանոս պատմագրի։ Նեստորական աւանդութիւնը իրենց խորհրդատետրի կազմակերպութիւնը կ՚ընծայէ Յեսուաբ Գ. (Yésuyab III) պատրիարքին՝ եօթներորդ դարուն սկիզբը։

Պատարագամատոյցս երկու մասեր ունի. Առաջինն է՝ Պատրաստութեան մասը, երկրորդը կրնանք կոչել էական մասն։

Ա. – Այս մասը կը բաժնէ հինգի. Սկզբնաւորութենէն մինչեւ մարգարէական գրոց ընթերցումը։ Նախ հրեշտակային երգակցութիւնը՝ Փառք ի բարձունս Աստուծոյն է, յետոյ Հայր մեր, ապա Զօրացո Տէր և Աստուած մեր զմխիթարութիւն մեր ողորմութեամբ քով.. սովորական օրերուն մէջ՝ զուարթանական աղօթքս առ Ս. Երրորդութիւն՝ Երկրպագի, փառաւորի, գովի, վերապատուի և օրհնի յերկինս և յերկրի փառաւորեալ և երկրպագեալ անուն Երրորդութեանդ՝ համապատիւ ով փառաւորեալ Տէր ամենեցունց, ինչպէս ԺԴ. Սաղմոս՝ Տէր ով կացցէ ի խորանի քում.. իր կանոնովը. զկնի այլ աղօթքներու է խնկարկութեան աղօթքս՝ Մատուցանեմք զերգս փառաւորեալ Երրորդութեանդ, Հայր, Որդի և Հոգի սուրբ.. և հուսկ՝ Սրբոց հաղորդակցութեան աղօթքս՝ Դու ով Տէր ստուգապէս յարուցիչ ես մարմնոց մերոց. և այլն։

Երկրորդն՝ Հին կտակարանի ընթերցուածներէն մինչեւ Աւետարանի ընթերցումն։ Ս. Գրոց ընթերցուածներէն առաջ այլ և այլ աղօթքներ կը մատուցուին։ Նախ երեքսրբեանը՝ Սուրբ, գովելի, հզօր, անմահ, և այլն։ Առաքելական ընթերցուածի պահուն՝ Լուսաւորեա զմեզ, Տէր Աստուած մեր, զյոյզս մտաց մերոց....։ Մալապարի ասորական եկեղեցւոյ Ծիսարանը առաքելոց թղթոց ընթերցման պահուն այսպիսի նորութիւնք չունի։

Երրորդն է Աւետարանէն մինչեւ երախայից դուրս ելլելը։ Քահանայն կ՚ողջունէ և կը խնկարկէ Աւետարանին, և խորանին առջև կ՚ընէ աղօթքս՝ Քեզ պայծառ ծնողին Հօր քո, և այլն. յետոյ կ՚երթայ ամպիոն յառաջընթաց ունենալով մոմակալները և կ՚ընթեռնու Աւետարանը բարձր ձայնով, որմէ վերջ կ՚ըսէ աղօթքս. Ով Տէր Աստուած կարող, աղաչեմք և խնդրեմք.. Սարկաւագներ կ՚ըսեն՝ ի վայր առէք զգլուխս ձեր... և քահանայն՝ լռելեայն՝ աստիճանաց վրայ կ՚ըսէ աղօթքս. Տէր Աստուած ամենակարող, քո է Եկեղեցի սուրբ կաթողիկէ... և ի վերայ ժողովրդեանս, զոր ընտրեցեր քեզ.. ձայնը բարձրացնելով կը յաւելու. Եւ տուր մեզ գթութեամբ քով.. և այլն։

Չորրորդը կը սկսի երախայից դուրս ելլելէն մինչեւ ընծայաբերումը։ Սարկաւագք կ՚ելլեն բեմին վրայ և կ՚աղաղակեն, Մի ոք յոչ մկրտելոց (յերախայից)։ Այս արարողութիւնս կայ և կը մնայ խորհրդատետրերու մէջ, բայց իրականօրէն չի գործադրուիր։

Հինգերորդն է Վերաբերութենէն սկըսեալ մինչեւ կանոն, այսինքն է Սրբագործութիւն։ Քահանայն կը սկսի հաւատացելոց պատարագ կոչուած մասը։ Այս ժամանակ կը բերէ աւանդապահէն՝ սկիհը և սկաւառակը ու կը դնէ սեղանին վրայ, քահանայն ձեռքերը խաչաձեւ բռնելով կ՚ըսէ. Մատուցանեմք զգովութիւն փառաւոր Երրորդութեանդ յամենայն ժամ և ի յաւիտեանս։ Քրիստոս, որ զենար վասն մեր.. և այլն. Դիցին (imponeatur) պայծառ, սուրբ և կենդանարար խորհուրդք ի վերայ սեղանոյ Տեառն հզօրի՝ մինչև ի գալուստ նորա ի յաւիտեանս, ամէն։

Բ. – Երկրորդ մասը, որ է Հաւատացելոց Պատարագ, դարձեալ հեղինակս հինգ բաժիններու կը վերածէ։

digitised by A.R.A.R.@

Առաջինը կը սկսի. Աղօթեցէք եղբարք. և կ'աւարտի մինչև Նախականոնը։ Պատարագիչ քահանայն խորանին կը մերձենայ, կը խոնարհեցնէ գլուխը երեք անգամ սեղանին, կը համբուրէ կեդրոնը և ապա աջակողմը և ձախակողմը, դարձեալ կը խոնարհեցնէ գլուխը դէպ ի բարձր խորանը և կը զուրցէ աղօթքս. Օրհնեա Տէր։ Աղօթեցէք վասն իմ, Հարք, Եղբարք և Տեարք իմ, զի տացէ ինձ Աստուած... — Ներկաները կը պատասխանեն. Քրիստոս յուիցէ աղօթից քոց, և հաճոյացի պատարագդ քո.. կը խոնարհեցնէ գլուխը դէպ ի խորանին վարը և նոյն աղօթքը կը կրկնէ և նոյն կերպով իրեն կը պատասխանեն։ Կը խոնարհի դէպ ի խորանն ու կ'ըսէ. Աստուած Տէր ամենեցուն եղիցի ընդ ձեզ ամենեսին շնորհօք և ողորմութեամբք, ի յաւիտեանս ամէն։ Անմիջապէս կը դառնայ սարկաւագին դէպ ի ձախակողմը և կ'ըսէ. Աստուած Տէր ամենեցուն հաստատեսցէ զքեզ քո.. Նորէն կը դառնայ՝ խորանին խոնարհելով և կ'ըսէ ցած ձայնով. Տէր և Աստուած մեր, մի՛ հայիր ի բազմութիւն մեղաց մերոց...։ Գլուխը վեր կը բարձրացնէ և ցած ձայնով կը զուրցէ. Խոստովանիմք ով Տէր և Աստուած մեր զձոխութիւն ապատաբուղին շնորհաց քոց առ մեզ...։ Այս աղօթքէս վերջ կ'ըսէ կանոնական աղօթքը. Եւ մատուցանեմք քեզ փոյթութեան, փառաւ, խոստովանութեան և երկրպագութիւն, այժմ և միշտ, և ի յաւիտեանս յաւիտենից։ Խաչի նշանը կ'ընէ, և կը պատասխանեն. Ամէն։ Այս պահուս խաղաղութիւն կու տան փոխադարձ մէկմէկու և կը զուրցեն կսբուղիկ, այսինքն ամէն անձանց համար՝ աղօթքը։ Սարկաւագը կ'ըսէ. Խոստովանիմք, խնդրեմք և ապաչեմք. քահանայն կ'ըսէ երկու աղօթքներս. Տէր Աստուած կարող օգնեա անմտութեան իմոյ..։ Տէր և Աստուած մեր, հաստատեա ի խորհուրդս իմ...։ Սարկաւագը կ'ըսէ. Այրուն և զգոյշ...։ Քահանայն կը բանայ խորհուրդը, այսինքն հացին և բաժակին մեծ քողը վերցնելով, կ'օրհնէ խունկը և կ'ըսէ բարձր ձայնով կանոնը. Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և սէր Հօր Աստուծոյ և հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ եղիցի ընդ մեզ ամենեցուն, այժմ...։ Յետոյ կը խաչակնքէ խորհուրդներուն վրայ (հաց և բաժակ), և կը պատասխանեն. Ամէն։

Երկրորդն է նախականոնէն սկսեալ մինչև ցյիշատակութիւն (յիշեա Տէր)։ Քահանայն կ'ըսէ. Ի վեր եղիցին (ընծայեսցին) միտք ձեր...։ կը պատասխանեն. Առ քեզ Աստուած Արքանամս, խուսակով և խոյրայէի, բազաւորդ փառաւորեալ։ Քահանայն կը դնէ խունկը և կ'ըսէ նախականոնը, մաս մը բարձր ձայնով և մաս մ'ալ ծածկաբար. յետոյ խոնարհած կ'ըսէ աղօթքս նոյն կերպով. Եւ ընդ զօրութիւնս երկնաւորս խոստովանիմք քեզ... և կը պատասխանեն. Ամէն։ Սարկաւագը այս ատեն կ'ըսէ՝ ...ի միտս ձեր։ Դրայեցէք զխորհուրդսին ընդ մեզ... և քահանայն խոնարհած կ'ըսէ ծածկաբար աղօթքս. Տէր Աստուած հզօր, ընկալ զպատարագս զայս վասն ամենայն սուրբ կաթուղիկէ եկեղեցոյ, վասն ամենայն հարց արդարոց և բարեպաշտից որք հաճոյ եղեն քեզ և վասն ամենայն մարգարէից և առաքելոց և վասն ամենայն մարտիրոսաց և խոստովանողաց, և վասն ամենայն սգաւորաց, անձկացելոց և հիւանդացելոց, և վասն ամենայն ակարաց և հարստահարելոց, և վասն ամենայն ենչեցեցելոց, որ ի մեզ անչատելոյ պանդիտեցան, և վասն ամենեցուն, որք խնդրեն աղօրս ի տկարութենէ մերմէ, և վասն իմ խոնարհ և հեզ մեղաւորիս... յետոյ խոնարհելով կ'ըսէ աղօթքս. Դու Տէր, վասն բազում գթութեան քո և անճառելի...։

Երրորդն է յիշատակութենէն մինչև յապաչելոց օրն քան զյարչարանս։ Յիշատակութիւնս նախընթաց աղօթքին շարունակութիւնն է. Եւ եկեսցէ, ով Տէր, Սուրբ Հոգին քո և հանգիցէ ի վերայ ընծայիս սոյսորիկ ծառայիցդ քոց, զոր ընծայեցին, և զսա օրհնեսցէ և սրբեսցէ, զի յիցի մեզ Տէր ի քաւութիւն մեղաց և ի թողութիւն մեղաւորաց, և ի յոյս մեծի յարութեան՝ ի մեռելոց, և ի նոր կեանս՝ յարքայութիւն երկնից,

digitised by A.R.A.R.@

ընդ ամենեսին որք հաճոյ եղեն առաջի նորա. և այլն։ Կը յաջորդէ կանոնը. Մատուցանելմ գերգա, զպատիւ, զիսստովանութիւն և զերկրպագութիւն անուան քում սրբոյ կենդանւոյ և կենդանացուցչի, այժմ և միշտ և ի յաւիտեանս յաւիտենից. կը խաչակնքէ քահանայն այս ասելն խորհրդոց (հացին, բաժակին) վրայ և կը պատասխանեն. Ամէն։ Կը խոնարհի քահանայն և կը համբուրէ խորանին կեդրոնը, աջակողմը և ձախակողմը, ապա կ'ըսէ աղօթքս. Մի խաչակողմը, ապա կ'առնու հացը երկու ձեռքերովը և աչքերը դէպ ի վեր բարձրացնելով կ'ըսէ. Գովութիւն առ առնուն քո սուրբ, Տէր Յիսուս Քրիստոս, և երկրպագութիւն առ մեծվայելչութիւն քո միշտ և ի յաւիտեանս. ամէն։ Զի հաց կենդանի է և կենդանացուցիչ, որ իջանէ յերկնից և տայ կեանս ընդհանուր աշխարհի, զոր ուտեն՝ ոչ մեռցին և որք ընդուներին՝ նովաւ կեցցեն և ոչ ապականեսցին և կեցցեն նովաւ ի յաւիտեանս. և դու ես անդեղեալ մահկանացութեան մերոյ և յաւուրիւն կերպարանաց մերոց։

Զորրորդն է Յառաջագոյն քան զօր չարչարանաց մինչև ցբեկումն մարմնոյն։ Քահանայն կը բեկանէ նշխարը և կ'ըսէ. Մատչիմք, ո՛վ Տէր, ձշմարիտ հաւատովք և բեկանեմք խոստովանութեամբ, և կնքեմք գրութեամբ քով, զմարմին և զարիւն կենսագործողին մերոյ Յիսուսի Քրիստոսի. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ապա կը բեկանէ նշխարը երկու մասի. ձախ ձեռքի մէջ բռնած մասը կը դնէ մաղզմային վրայ, և աջ ձեռքին մէջ բռնած մասով կը կնքէ բաժակը ըսելով. Կնքի պատուական արիւնն սուրբ մարմնով Յիսուսի Յիսուսի Քրիստոսի. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ի յաւիտեանս։ Կը թաթախէ զայն բաժակին մէջ՝ մինչև մէջտեղը։ Կը կնքէ մաղզմային վրայ զանուամ մարմինը՝ ըսելով. Կնքի սուրբ մարմին արեամբ քաւչարարի Յիսուսի մերոյ Յիսուսի Քրիստոսի. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ի յաւիտեանս։ Ապա կը միացնէ երկու մասերը և կը զուրցէ աղօթքս. Բաժանեալ են, սրբազնեալ, լրացեալ, կատարեալ, միացեալ, խառնեալ (commixta) խորհուրդքս այսորիկ գերապանծ, սուրբ, կենդանարար և աստուածային մին ընդ միւսոյն, յերկրպագելի և ի փառաւորեալ յանուն Երրորդութեանդ, ով փառաւեղ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, զի լիցին ի քառութիւն յանցանաց և ի թողութիւն մեղաւորաց, ի յոյս մեծի յարութեանն ի մեռելոց և նորոյ կենաց յարքայութիւնն երկնից, մեզ և եկեղեցւոյ սրբոյ Քրիստոսի Յիսուսի մերոյ, աստ և յամենեսին տեղիս, այժմ և միշտ, և ի յաւիտեանս յաւիտենից։ Եռաստաղ բթով նշխարին վրայ ճեղք մը կը բանայ, այնպէս որ արիւնը հոն թափանցէ. մաս մը կը ձգէ բաժակին մէջ, ծունր կը դնէ, կ'ելլէ և կը զուրցէ աղօթքս. Փառք քեզ Տէր Յիսուս Քրիստոս... և կը խաչակնքէ իր ճակատը։

Հինգերորդն է մարմնոյ բեկումէն մինչև վախճանը։ Քահանայն կը սկսի բեկանել մարմինը և կ'ըսէ. Քաւեա, Տէր, գթութեամբ քով զվեղս և զանմտութիւն ծառայից քոց և սրբեա զշրխտեա մեր շնորհօք քովք, զի տացին աստուածութեան քո՝ փառաց և գովութեան արդիւնս ընդ ամենայն սուրբս քո յարքայութեան քում։ Հոս բարձր ձայնով կը շարունակէ աղօթքս. Եւ արժանի արա զմեզ, Տէր Աստուած մեր, զի մշտապէս անարատ առաջի քո կացցուք մաքրութեամբ սրտի, պարզութիւն և համարձակութեամբ վասն գթութեամբդ մեզ շնորհելոց, և վասն ամենեցուն ևս զոչեցուցոյ առ քեզ և այսպէս ասասցուք՝ Հայր մեր, և այլն։ Ներկայք ալ Տէրունական « Հայր մեր » աղօթքս զուրցելէն վերջ՝ քահանայն կը խաչակնքէ և կ'ըսէ. Արքութիւնք վայելին ի կատարելութիւն սրբոց. կը պատասխանեն. Միայն Հայր սուրբ, միայն որդի սուրբ, միայն Հոգի սուրբ, փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ի յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ Սարկաւագը կը մատուցանէ բաժակը հաղորդուելու համար և կ'ըսէ. Խնդրեմք զիա-

digitised by A.R.A.R.@

դաղութիւնն ընդ մեզ։ Քահանայն կը զուրցէ. Շնորհք Սուրբ Հոգւոյն եղիցի ընդ քեզ, ընդ մեզ և ընդ մատչելոցն առ նա։ Բաժակը կը դարձնէ սարկաւագին՝ որ կ'ըսէ. Օրհնեա Տէր։ կը պատասխանէ քահանան. Պարզև շնորհաց կենարարին և Տնաւոր մերոյ Յիսուսի Փրիստոսի ողորմութեամբ յիցի ընդ ամենեսին։ Սարկաւագը կը բաշխէ սուրբ հաղորդութիւնը հետեւեալ աղօթքը ըսուած պահուն. Եղբարք, առէք զմարմին Որդւոյն, աղաղակէ եկեղեցի, և արբէք զբաժակն նորա հաւատովք ի տան արքայութիւն։ Քահանայն կը վերջացնէ պատարագը աղօթքով, գովութեամբ և Աստուծոյ շնորհաց հանդէպ շնորհակալութեամբ և օրհնութեամբ։

Գրութեանս հեղինակը պատարագամատուցիս մէջ կը նշանակէ Արևմտեան եկեղեցւոյ ծիսարանէն չորս տարբերութիւնքս։ Առաջին յիշեալները, որ մասնաւոր տեղ մը կը բռնեն արքագործութենէն առաջ և յետոյ։ Երկրորդ հացն և բաժակը առանձին քոզեր ունին և երկուքն ի միասին մեծ քոզով մը կը ծածկուին, զորս ասորիք կը կոչեն անաֆորա։ Երրորդ նախականոնի միջոց կը վարեն խնկարկութիւն։ Չորրորդ՝ ունի երկու անգամ բեկումն հացի. առաջինով՝ հացը միայն երկու մասի կը բաժնէ, և առաջինը կը ներկայացնէ՝ Յիսուսի չարչարանաց ժամանակ՝ մարմնոյն վէրքերը և ճմլումները։ իսկ երկրորդը բազում մասերու կը բաժնէ՝ բաշխելու և հաղորդելու համար հաւատացեալները։ Հաղորդութիւնը կը բաշխուի երկու տեսակով ի միասին ամէն հաւատացեալներու ալ։

Կերհարտ Իսուխէն՝ Պոնի համալսարանի Աստուածաբանութեան վարդապետը՝ իր Առձեռն Հայրագիտութեան մէջ (Զ. գլուխ, 57 հատուած) կը համարի, որ ամէն ծիսարանաց աղբիւրը կամ բովանդակութիւնն ըլլայ Սրբոց Առաքելոց վարդապետութեան մէջ գտնուածը։ Ըստ Ֆունքի Առաքելական սահմանադրութեան ութ գրքերուն մէջ բովանդակուած վերոյիշեալը կը համարի յօրինուած ըլլալ Դ. Դարուն վերջը՝ 400ին ժամանակ՝ Ասորւոց երկրին մէջ։ Բայց կան հիմնական կամ գործնական ապացոյցներ, որոնց համեմատ պէտք է աւելի հին ժամանակի ընծայել ասոր յօրինումը, մանաւանդ իրենց աղբիւրները։ Վասն զի անհրաժեշտ պէտք էր, որ առաքելք տասն և չորս տարիներ Հրէաստանի մէջ քարոզութեանց ժամանակ՝ ունենային, ինչպէս Հանգանակը, այսպէս ալ Հաղորդութեան և պատարագի սուրբ խորհուրդին համար որոշ և հաստատուն ձև մը և աղօթքներ։ Արդէն եթէ ամէնն հին պատարագամատոյցներու հետաքրքին ակնարկ մը տրուի՝ յայտնի կ'երևի, որ աղբիւրը և ակը նոյնն է, բայց դարերու յաջորդութեամբ ունեցեր են ըստ ազգաց՝ յաւելուածներ կամ յապաւումներ։ Պատարագամատոյցիս հայերէն թարգմանութեան մասին տեղեկութիւնք այլ պատեհի թողլով՝ այսչափ յաւելում, որ մեր ծիսարանին հետ ինչ ինչ աղերսներ ունի։

Գաթրեհան Վ.ի Սրբազան Պատարագամատոյցի մէջ կը գտնեմ (էջ 70–73) Ադդէի և Մարիսի պատարագ վերնագրոյն ներքև հետեւեալ տեղեկութիւնները. «Այս պատարագը, զորն որ հին աւանդութիւնը կը համարի թէ Ս. Թադէոս կամ Ադդէ և Ս. Մարիս, Ասորւոց առաջին եպիսկոպոսք, յօրինած ըլլան երանելի առաքելոց պատարագին վրայէն, — կրնայ ենթադրուիլ, որ սուրբ Լուսաւորչի յաջորդները Ասորւոցմէ առնլով — գործածած են՝ Հայաստանի գոնէ պաշտօնական կողմերը։ Ասոր համար պատշաճ կը տեսնենք հոս այն պատարագէն ճաշակ մը տալ»։ — Վարդապետս կը սկսի վերեւ նշանակած «հաւատացելոց պատարագէն» մաս մը միայն։ Մանօթագրութենէն նշանակելի է հետեւեալն. «Ադդէի և Մարիսի ընծայուած պատարագը՝ սովորութիւն է այժմ նաև արևելեան ասորական անուանել. վասն զի նեստորականաց քով ի գործածութեան եղած է և է, թէև նեստորականութենէ շատ յառաջ այն արևելեան գաւառաց մէջ կը գործածուէր, որով նոյն աղանդին հետքէն իսկ ազատ մնացած է և հնագոյն սովորութիւններ պահած։ Ըստ Պիքքէլի՝

digitised by A.R.A.R.@

թէոդորոսի և Նեստորիոսի անուն կրող պատարագներն ալ պարզ նմանողութիւն են Ադաքելական պատարագին։ Ադաքելինը բոլորովին զերծ է նեստորականութենէ, և երկրորդն ալ շատ մեղմ ազդուած, այնպէս որ այն խռովութեան սկիզբները ծագած ըլլալու է, երբ դեռ յունախօս հեռուներ ալ ունէր հռովմէական կայսրութեան մէջ, ինչպէս կը ցուցնէ Հոգւոյն Սրբոյ Կոչման աղօթից սա յաւելուածը, փոխարկեալ Հոգւովդ արդով, որ միայն կոստանդնուպոլսոյ երկու պատարագաց մէջ կը գտնուի և անկէ անցած է հայերէն սովորական պատարագին։ Արևելեան ասորի ծէսը կը ներկայացնէ նաև ասորի պատարագ մը՝ որ բրիտանական թանգարանին Զ. դարէն ասորի ձեռագրի մը մէջ կը գտնուի և զոր Պիքքէլ լատիներէնի թարգմանած է, թէև շատ տեղ անկարելի է կարդալ՝ ձեռագիրն եղծած ըլլալով։ Այս գիտնականը կը պատրաստէ Արևելեան–ասորի պատարագի ամէն ծանօթ նիւթերուն և այն պատարագաց աղբերաց քննութիւն մը։ Այն ասորի պատարագին ընդհանուր ձևն ու պարունակութիւնը՝ որ Եփրեմայ ժամանակ ի գործածութեան էր՝ այս հեղինակին զրութիւններէն վերակազմել փորձած է Փրոփսթ իւր նոր զրութեան մէջ։

Բայց օգտակար գործ մը պիտի ըլլայ մեր հնասէր զրագիտաց, եթէ հայ լեզուով գտնուած և թարգմանուած ամէն պատարագներու ի միասին բաղդատական հրատարակութիւն մը ի լոյս ընծայուէր, որ շատ դիւրութիւններ պիտի ընծայէր հնախօս եկեղեցական պատմագրաց և հայրախօսներուն։

Ռ. Կ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔՈՎ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմ. էջ 266)

8. – Տեսանք՝ որ Դ–Ե դարուց մեր աշխարհիկ դպրոցներն արդիւնք էին հոգեւոր առաջնորդաց ձեռներիցութեան, և միանգամայն թագաւորաց պաշտպանութեան ու գործակցութեան։ Հետևաբար Արշակունեաց գահուն կործանմամբ՝ պիտի ջնջուէին հասարակաց դպրոցներն ալ։ Չենք կարող ըսել ճշդիւ՝ թէ ե՞րբ փակուեցան անոնք։ Գիտենք՝ որ Վարդանանց օրով արդէն սկսած էին առանձնական դպրոցները[1]։ Եւ պատերազմն ինքնին վեր ի վայր պիտի ընէր հայ աշխարհը, առանց հետքը թողուն նախկին բարեկարգութեանց, որոց չէին կարող նպաստել Խորենացւոյն թուած չարիքները. «յօտարութիւն վտարումն ազատաց, և անթիւ նեղութիւնք ռամկաց, առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց, աւերումն աւանաց և հրդեհումն շինուածոց», որոնք միանգամայն կուտեցան Հայոց գլխին[2]։

Ադոր հետ կը ծաւալի ներքին չար նախանձն ալ ուսումնականաց դէմ, որ կը խցէ զարգացման ամէն ճանապարհ, և որոյ մասին պիտի խօսինք յետոյ[3]։ Վերջապէս՝ երկրին այդ ապականութիւնը և գրչի մը–շակաց հալածանքն ու վարատումը՝ ոչ մէկ երաշխաւորութիւն կ'ընծայեն մեզ դպրոցաց գոյութեանը 451 չարաշուք թուականէն յետոյ։

Մասնական ու տեղական հանգամանք մ'ունէր գեղեցիկ ձեռնարկը Սմբատ Բագրատունւոյ, որ Պարսից Խոսրով Բ թագաւորէն (590–627) մարզպան կը կարգուի Վրկանայ։ Եւ իւր սահմանաց մէջ՝

1. Դ.սա՝ յօդ. Գ։ — 2. Խոր. Գ, կը։ — 3. Ա.սա՝ Գլ. Դ, յօդ. Բ։

digitised by A.R.A.R.@